

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՍԵԿՏՈՐԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

I. Արտոնագրային ստորաբաժանման հիմնական նպատակները և խնդիրներն են՝

1. Մտավոր սեփականության օբյեկտների իրավական պահպանության հետ կապված օրենսդրությամբ սահմանված գործողությունների իրականացումը և տեղեկատվության ապահովումը:
2. Նոր սարքերի, սարքավորումների և տեխնոլոգիաների ստեղծման ժամանակ արտոնագրային ունակության և արտոնագրային մաքրության ապահովումը, արտոնագրային փաստաթղթերի օգտագործման ժամանակ մեթոդական հսկումը:
3. Հայաստանի պետական ագրարային համալսարանում կատարվող գիտահետազոտական թեմաների ուսումնասիրությունը՝ նոր գյուտեր կամ օգտակար մոդելի հայտ բերելու նպատակով:
4. Հայտերի ձևակերպումը:
5. Արդյունաբերական սեփականության օբյեկտների /գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների/ պաշտպանությունը:
6. Հայաստանի պետական ագրարային համալսարանում կատարվող թեմաներին արտոնագրային լրատվությամբ և փաստաթղթերով սպասարկումը:
7. Գյուղատնտեսության բնագավառում գիտամանկավարժական և ինժեներատեխնիկական աշխատակազմի որակավորման բարձրացումն արտոնագրության բնագավառում:
8. ՀՊԱՀ արտոնագրային հիմնապաշարների համալրման օժանդակումը:

II. Արտոնագրային ստորաբաժանման գործառույթները

1. Արտոնագրային ստորաբաժանումն իր նպատակների և խնդիրների իրականացման համար արտոնագրային ունակությամբ և արտոնագրային մաքրությամբ նոր մեքենաների, սարքերի, տեխնոլոգիաների, բուժիչ, ախտահանիչ և կանխարգելիչ միջոցների ստեղծման ժամանակ իրականացնում է՝

- նոր գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական մնուշների ժամանակին հայտնաբերում գիտահետազոտական և դիպլոմային աշխատանքներում.
- հեղինակների մասնակցությամբ թեմային վերաբերվող արտոնագրային դասի /ՄԱԴ/ որոշում և արտոնագրային ուսումնասիրությունների կատարում.
- աշխատանքների արտոնագրային մաքրության ստուգում հեղինակների մասնակցությամբ.
- գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական մնուշների, ապրանքային նշանների նախնական փորձաքննություն, գրանցումների կատարում, նոր հայտերի ներկայացում մտավոր սեփականության գործակալության և պետական փորձաքննության ընթացքին հետևում:

2. Պետության և հեղինակային առաջնությունն ապահովելու նպատակով արտոնագրային ստորաբաժանումը

- կազմակերպում է արդյունաբերական սեփականության օբյեկտների ժամանակին հայտնաբերում գիտահետազոտական և դիպլոմային աշխատանքներում.
- մասնակցում է հողվածների տպագրության հնարավորությունները որոշող փորձաքննական հանձնաժողովի աշխատանքներին.
- կազմակերպում և օգնում է նոր սելեկցիոն նվաճումների վերաբերյալ հայտերի ձևակերպմանը, որոնք ներկայացվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարություն.
- կատարում է պետական տուրքերի փոխանցում և հետևում նրանց հետագա ժամանակին վճարումներին:

3. Արտասահմանում արտոնագրելու նպատակով.

- կատարում է գյուտերի ընտրություն և ներկայացում է արտասահմանյան երկրների պահանջներին համապատասխան հայտեր.
- մասնակցում է արդյունաբերական սեփականության օբյեկտների օգտագործման իրավունքի ընձեռնման` լիցենզիոն պայմանագրերին վերաբերվող բանակցություններին և հետագա աշխատանքներին, որոնք վերաբերվում են պայմանագրերի կատարմանը:

4. Արտոնագրային ստորաբաժանումը ստուգում է գիտահետազոտական աշխատանքների արտոնագրային մաքրությունը և մեթոդական օգնություն է ցուցաբերում արտոնագրային փորձաքննության բոլոր փուլերում:
5. Համարում է ՀՊԱՀ արտոնագրային ֆոնդը նոր արտոնագրային լրատվության աղբյուրներով: